Հավելված N231
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 636-Լ հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գործարար և ներդրումային միջավայրի բարելավման վարչության (այսուհետ՝ Վարչություն) գործարար միջավայրի բարելավման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիրը՝ 23-32.9-Մ2-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս Գլխավոր մասնագետներից մեկը կամ ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում միջազգային մակարդակով մրցունակ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորմանն ուղղված քաղաքականության մշակման և դիտանցման աշխատանքները.
2. իրականացնում է գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակմանն ու կիրարկմանն ուղղված աշխատանքներ.
3. իրականացնում է գործարար միջավայրի բարելավմանը խոչընդոտող խնդիրների վերացման ուղղությամբ առաջարկների ներկայացմանն ուղղված աշխատանքներ.
4. իրականացնում է «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային զեկույցով գնահատվող ոլորտների ուսումնասիրություն և առկա ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ ներկայացնում է առաջարկություններ.
5. իրականացնում է գործարար համայնքի հետ հետադարձ կապի ապահովմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝ իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումներ վերջինիս հետ.
6. իրականացնում է գործարար ու ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից՝ հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանում, քաղաքականության մշակում և առաջարկությունների ներկայացում.
7. իրականացնում է գործարար միջավայրին առնչվող խնդիրների թեժ գծի աշխատանքը.
8. իրականացնում է պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ միջազգային վարկային ծրագրերի մշակում.
9. համագործակցում է պետական և միջազգային կառույցների հետ.
10. իրականացնում է հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների.
11. իրականացնում է ՀՀ-ի գործարար միջավայրը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ.

12. իրականացնում է ՀՀ-ում գործարար միջավայրը կարգավորող այլ գերատեսչությունների կողմից մշակված օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկում և ներկայացնում է առաջարկություններ.
13. իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից մշակված ռազմավարական փաստաթղթերի նախագծերի քննարկմանն ու առաջարկությունների ներկայացմանն ուղղված աշխատանքներ.
14. իրականացնում է ծանուցումներ գործարար համայնքին՝ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ:
15. իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներքին շուկայի զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումները.
16. իրականացնում է ՀՀ-ում ապրանքային շուկայի մասնակիցների (արտադրող, մեծածախ առևտրի և այլ միջնորդ կազմակերպություններ, մանրածախ առևտրի կազմակերպություններ և սպառողների կազմակերպություններ) զարգացման, համագործակցության համակարգերի մշակումը և ներդնումը.
17. իրականացնում է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության մշակումը, տնտեսական մրցակցության զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերհանումը և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը
18. իրականացնում է կենցաղային ծառայությունների ոլորտը կարգավորող մեխանիզմների մշակումը.

Իրավունքները՝

- Պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում միջազգային մակարդակով մրցունակ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորմանն ուղղված քաղաքականության մշակման և դիտանցման աշխատանքների համար անհրաժեշտ հիմնավորումները և փաստաթղթեր .
- Պահանջել և ստանալ համապատասխան մարմիններից գործարար միջավայրի բարելավմանը խոչընդոտող խնդիրների վերացման ուղղությամբ անհրաժեշտ տեղեկատվություն
- Ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային զեկույցով գնահատվող ոլորտների ուսումնասիրության և առկա ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ
- Պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն գործարար ու ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից՝ հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանման և քաղաքականության մշակման համար.
- Մասնակցել քննարկումներին համապատասխան մարմինների և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների հետ գործարար համայնքի հետ հետադարձ կապի ապահովմանն ուղղված աշխատանքների, իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների ստացման նպատակով.
- Պահանջել և ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ է ՀՀ-ի գործարար միջավայրը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների համար
- Պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներքին շուկայի զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումների իրականացման համար

- Պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն միջազգային վարկային ծրագրերի մշակման նպատակով.
- Համապատասխան շահագրգիռ մարմիններից ՀՀ-ի գործարար միջավայրը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ.
- Մասնակցել քննարկումներին և ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից մշակված ռազմավարական փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ
- Պահանջել և ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ է ՀՀ-ի գործարար միջավայրը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների համար.
- Պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներքին շուկայի զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումների իրականացման համար
- Պահանջել և ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ՀՀ-ում ապրանքային շուկայի մասնակիցների (արտադրող, մեծածախ առևտրի և այլ միջնորդ կազմակերպություններ, մանրածախ առևտրի կազմակերպություններ և սպառողների կազմակերպություններ) զարգացման, համագործակցության համակարգերի մշակման և ներդնման համար
- Պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության մշակման, տնտեսական մրցակցության զարգացման խոչընդոտող խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ
- Ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից պարզաբանումներ և բացատրություններ:

Պարտականությունները՝

- մշակել Հայաստանի Հանրապետությունում միջազգային մակարդակով մրցունակ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորմանն ուղղված քաղաքականությունը և իրականացնել դիտանցման աշխատանքները.
- մշակել գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների կիրարկմանն ուղղված աշխատանքները.
- առաջարկներ ներկայացնել գործարար միջավայրի բարելավմանը խոչընդոտող խնդիրների վերացման ուղղված աշխատանքներին.
- ուսումնասիրել «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային զեկույցով գնահատվող ոլորտները և առկա ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ.
- իրականացնել գործարար համայնքի հետ հետադարձ կապի ապահովմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝ իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումներ վերջինիս հետ.
- Մշակել գործարար ու ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից՝ հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանումը, քաղաքականությունը և առաջարկություններ ներկայացնել.
- իրականացնել գործարար միջավայրին առնչվող խնդիրների թեժ գծի աշխատանքը.
- մշակել պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ միջազգային

վարկային ծրագրերը.

- համագործակցել պետական և միջազգային կառույցների հետ.
- ուսումնասիրել հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքները.
- մշակել ՀՀ-ի գործարար միջավայրը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր.
- Քննարկել ՀՀ-ում գործարար միջավայրը կարգավորող այլ գերատեսչությունների կողմից մշակված օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերը և ներկայացնել առաջարկություններ.
- Քննարկել ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից մշակված ռազմավարական փաստաթղթերի նախագծերը և առաջարկություններ ներկայացնել.
- տրամադրել ծանուցումներ գործարար համայնքին՝ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ:
- իրականացնել Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներքին շուկայի զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումներ.
- մշակել և ներդնել ապրանքային շուկայի մասնակիցների (արտադրող, մեծածախ առևտրի և այլ միջնորդ կազմակերպություններ, մանրածախ առևտրի կազմակերպություններ և սպառողների կազմակերպություններ) զարգացման, համագործակցության համակարգերը.
- մշակել տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականությունը, վերհանել տնտեսական մրցակցության զարգացմանը խոչընդոտող խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնել.
- մշակել կենցաղային ծառայությունների ոլորտը կարգավորող մեխանիզմներ.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Գլխավոր մասնագետն ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4.Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում և կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: